

լային: Վերջապէս տեսնելով՝ որ Կրիպոր Պատրիարքը կ'ուզէ վերջնականապէս հրաժարիլ պատրիարքութենէ, ուրիշներուն եւ իւր աշակերտ Նուրաինեան Վին յորդորներուն անտարով՝ փութացուց կատարումը. գրքերու վաճառումը կարգադրեց, տանը կահարասին քոյրերուն տուաւ, եւ ամենայն ինչ ոսկւոյ վերածեց, Մարտիլիա գացող նաւ մը վարձեց, Նուրաինեանին հետ բոլորովին գալտնի մեկնեցաւ Պոլսէն 29 Սեպտ. 1772ին, եւ 24 օր նաւելէն ետեւ Մարտիլիա հասաւ:

10.

Սարգսի հաւատքին բազմաթիւ ճանաչողներու անուններ: Իր մեկնումը Պոլսոյ մէջ մեծ տպաւորութիւն գործեց: Սամուէլ Եպ. Լաճնան, Պրուսայի Առաջնորդը: Ղազար Ամմարիին Արքեպ. Տրասպիզոնի կաթողիկեայ. Կարնեցի Տէտէ Յովնանէս Վ.: Յարութիւն Արքեպ. Բասննցւոյ Նամակը. Յարութիւն Պետամնանի ընդարձակ Նամակը: Գր. Պասմաճեան Պատրիարքի ընդարձակ կենսագրութիւնը: Յարութիւն Արք. Բասննցւոյ կենսագրութիւնը: Սարգիս ի Մարտիլիա, ի Լիվոնոյ. հիւանդութեանն սկիզբը: Կ. Պոլսեցի Յակոբ Մեսրոպ Արքեպ. Քեահեա Արապեան. Կ. Պոլսեցի Աղեքսանդր Արաւանեան, Արքեպ Վանայ. Սիմոն Եպ. Ումուտեան, Սամուէլ Եպ. Երզնկացի կաթողիկեայք ի Հոմ: Սարգիս հոգեվարք, իր կտակը, մահը, թաղումը: Իր հոգւոյն համար մշտնջենաւոր Պատարագ. իր շիրիմը, գինանշանը, տապանագիրը:

Սարգիս Արքեպ. օրտով եւ վարդապետութեամբ ուղղափառ կաթողիկեայ՝ 1754էն մինչեւ 1772 ջանաց քարոզութեամբ ազգն ուղղափառութեան բերել, եւ յաջողեցաւ շա-